Դանիել Վարուժան

Աղորիք

Է՜յ աղորիք, դարձի՛ր, դարձիր,
Ներստած կանանչ խորը ձորին.
Աղաղակե՛ երգըդ խորին
Դեպի լուսնակն արծաթածիր:

Դուն դողդոջուն տընակ մըն ես
Ալյուրոտած պատերով՝ ուր
Կարծես կու լան հիազարհուր
Ջըրանույշներ հագած բեհեզ:

Միշտ կը հըսկե մեջըդ արթուն,
Աղորեպանը ճեփ-ճերմակ.
Եվ ըստ պետքի՝ մեղմ կամ արագ՝
Կը լարե սի՛րտըդ բաբախուն:

Է՜յ աղորիք, բանտվա՛ծ մրրիկ
Ծառերուն մեջ. Աղա՛, աղա՛,
Փըրփուր խըմե՛, ալյուր տեղա՛.
Քարե կուրծքեդ տեղա՛ բարիք:

Կեցո՛ւր գետակն ընթացքին մեջ
Իր ծըփանուտ բաշեն բըռնած:
Ջըրվեժն ահեղ երգի փոխած

Պոռթկա վիհեն վար գահավեժ:

Սայլե՛ր, սայլե՛ր անծայրածիր
Ջաղացքներուն ճերմակ ճամբեն
Աղոնն իրենց քեզ կը բերեն…
Է՛յ աղորիք, դարձի՛ր, դարձիր:

Ցորեններ թող ալյուր ըլլան
Պորտին մեջ ժիր երկաններուն՝
Որոնք բռնված տենդով մ՚անհուն
Կը մրոլտան ու հիռ կու գան:

Ցորեններ թող ըլլան փոշի
Ջիրար գրրկող քարերուն տակ.
Ջիրար կրրծող ժայռերուն տակ
Ցորեններ թող ըլլան նաշիհ:

Մինչև լեցվին շարան շարան
Պարկերն, ու վե՛ր կանգնին նորեն.
Եվ սայլերն ալ ճրռվողելեն
Ոսկի թողած լույսով դառնան: